ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

*Հայկ Մարգարյան**

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ՝ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *տեղական ինքնակառավարում, իշխանության ապակենտրոնացում, Թուրքիայի տարածքային կառավարման մոդել, ազատ համայնքի տեսություն, ինքնակառավարման պետական տեսություն:*

Եթե նախորդ դարի կեսերին միջազգային քաղաքագիտական միտքը հիմնականում շրջանցում էր տեղական կառավարումը և դրա խնդիրները[1], ապա մեր օրերում իշխանության ապակենտրոնացումը դարձել է քաղաքական հետազոտությունների հարգված ուղղություններից մեկը[2]: Ուստի լիովին բնական է, որ որևէ երկրի տեղական ինքնակառավարման համակարգի համակողմանի քննություն կարող է կատարվել միայն ՏԻՄ վերաբերյալ գոյություն ունեցող քաղաքական տեսությունների ծիրում:

Նախ, անդրադառնանք, թե ինչ է տեղական կառավարումը: 1960-ական թթ. սկզբին ամերիկացի հետազոտող Ուիլիամ Մաքքենզին գրում էր. *«Տեղական կառավարման վերաբերյալ որևէ*

** ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի հայցորդ:*

[1] Herson L., *The Lost World of Municipal Government,* The American Political Science Review, vol. 51, no. 2, 1957, pp. 330-345.

[2] Sellers J., Lidström A., *Decentralization, Local Government, and the Welfare State,* Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, vol. 20, no. 4, October 2007, p. 609.

տեսություն չկա: Չկա որևէ նորմատիվ ընդհանուր տեսություն, որից մենք կարող ենք եզրակացնել, թե ինչպիսին պիտի այն լինի»[3]: 2000-ական թթ. վերջին Ջեյմս Չանդլերը կարծիք էր հայտնում, որ այս պնդումը շարունակում է արդիական մնալ[4]: Այս տեսակետի հետ ոչ ամբողջությամբ կարելի է համաձայնել: Նույն ինքը Չանդլերն, օրինակ, նշանակալի աշխատանք է տարել այս ուղղությամբ[5], սակայն պետք է հասկանալ, որ նրա այս միտքն ուղղակիորեն մատնացույց է անում հարցի առավել խորը ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Վերադառնալով տեղական կառավարման սահմանմանը՝ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ դրան հասնելու համար ընտրվում է սովորաբար երկու ելակետ. կա՛մ տեղական իշխանությունը դիտվում է իբրև կենտրոնական իշխանության մաս, կա՛մ սահմանումը կառուցվում է տեղական ու կենտրոնական իշխանությունների փոխհարաբերությունների[6] օրինաչափությունների վերհանման վրա[7]: Մեր կարծիքով՝ տեղական կառավարման առավել դիպուկ սահմանում է տալիս Արթուր Մարշալը՝ առանձնացնելով բնութագրական 3 հիմնական ատրիբուտ՝ տարածքային (*«պետության մեջ սահմանափակ աշխարհագրական տարածքում»*), ձևաչափային (*«տեղական*

[3] Mackenzie W., *Theories of Local Government*, London School of Economics and Political Science, 1961, p. 5.

[4] Chandler J., *Liberal justifications for local government in Britain: The triumph of expediency over ethics*, Political Studies vol. 56, no. 2, 2008, p. 355.

[5] Մասնավորապես, տե՛ս նույնի, *Local government today,* 4th ed., Politics Today MUP, Manchester University Press, 2009 և *Explaining Local Government: Local Government in Britain Since 1800*, Manchester University Press, 2007

[6] Տեղական և կենտրոնական իշխանությունների համահարաբերակցության սկզբունքների վերաբերյալ տե՛ս Heymans C., Totemeyer G., (1988) *Government by the people? Politics of local government in South Africa*. Juta, 1988, p. 8:

[7] Olowu D., African *Local Governments as Instruments of Economic and Social Development*, International Union of Local Authorities, 1988, p.12.

ընտրություն կամ նշանակում») և գործառութային (*«ինքնիշխանության որոշակի աստիճան»*)[8]: Միաժամանակ, անհրաժեշտ է հստակորեն տարբերակել տեղական կառավարումը տեղական ինքնակառավարումից[9]: Վերջինս պահանջում է շատ ավելին, քան կենտրոնական իշխանությունների կողմից կայացված որոշումների կենսագործումը: Ժամանակակից տեղական ինքնակառավարումը ենթադրում է նաև, որ տեղական մարմիններն ունեն որոշումներ կայացնելու հնարավորություն ու նաև որոշակի քաղաքական ինքնուրույնություն: Ըստ էության, ՏԻՄ կայացած համայնքը իշխանության հաջողված ապակենտրոնացման դասական օրինակ է:

Տեղական ինքնակառավարման մարմնի ինքնուրույնության[10] և անկախության խնդիրն (կազմակերպական ձևի, լիազորությունների և վերահսկողության տեսանկյուններից) ընկած է ՏԻՄ կազմակերպման վերաբերյալ տեսությունների հիմքում[11]: Ստորև անդրադառնանք դրանցից առավել հայտնիներին:

---

[8] Marshall A., *Financial administration of Local Government,* George Allen & Unwin, London, 1965, p. 1.

[9] Տե՛ս Лангинен А., *О соотношении понятий «местное управление», «местное самоуправление», «муниципальное управление»,* Ars Administrandi, №1, 2009, сс. 112-117 և Мельников А., *К вопросу о соотношении понятий «местное управление» и «местное самоуправление», Веснік БДУ, сер. 3, 2012, № 3, сс. 82-85.*

[10] Տեղական ինքնակառավարման մարմին – կենտրոնական իշխանություն հարաբերությունների վերաբերյալ առկա տեսությունների մասին տե՛ս Bilgiç V., *Merkezi yönetim - yerel yönetim ilişkileri üzerine teoriler*, Çağdaş Yerel Yönetimler, c. 7, sayı 2, ss. 27-35:

[11] Մանրամասն տե՛ս Пляйс Я., «*Теории и модели местного самоуправления в интерпретациях отечественных и зарубежных политологов (обзор диссертационных исследований российских политологов)» в* Пляйс Я., Мухарямов Н., *Местное самоуправление в России и Германии.* История и современность, Москва, 2012, сс. 12-33

Ազատ համայնքի (համայնքի բնական իրավունքների) տեսությունն առաջին տեսական կոնցեպտն է՝ կոչված բացատրելու տեղական ինքնակառավարման էությունը: Այն վերջնականապես մշակվել է 18-րդ դ. վերջին և հատկապես 19-րդ դ. առաջին կեսին Ֆրանսիայում և Բելգիայում Ժ.-Գ. Տուրեի, Ա. դը Տոկվիլի[12], Հ. Արենսի[13] և այլոց կողմից: Տեսության հիմնադրույթներն առաջին անգամ հրապարակվել են Ժակ-Գիյոմ Տուրեի կողմից 1789 թ. սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովի առջև կարդացված տեղական ինքնակառավարման բարեփոխումներին նվիրված զեկուցման ժամանակ[14]: Դրանք ընդհանուր գծերով հանգում են հետևյալին.

- համայնքն իր բնությամբ օժտված է ինքնուրույնության և կենտրոնական իշխանությունից անկախության իրավունքով, ընդ որում՝ պետությունը ինքը չի ստեղծում համայնք,
- սեփական գործերը վարելու՝ համայնքի իրավունքը նույնքան բնական ու անօտարելի է, ինչքան մարդու իրավունքը. քանի որ համայնքը պետության նկատմամբ առաջնային է, վերջինս պետք է հարգի համայնքային ինքնավարության ազատությունը,
- տեղական ինքնակառավարման մարմինների անդամները ենթակա են համայնքի անդամների կողմից ընտրության,

[12] Տեղական ինքնակառավարման վերաբերյալ դե Տոկվիլի հայացքների համար տե՛ս Gannett R., *Tocqueville and Local Government: Distinguishing Democracy's Second Track,* The Review of Politics, vol. 67, no. 4, 2005, pp. 721-736:

[13] Բնական իրավունքի (այդ թվում՝ ինքնակառավարման իրավունքի) մասին Արենսի հայացքների համար տե՛ս Ahrens H., *Cours de droit naturel*, Paris, 1839.

[14] Hampson N., *A Social History of The French Revolution,* Routledge, 2013, p. 112: Զեկույցի տեքստը բնագրով տե՛ս Mavidal J. (éd.), *Archives parlementaires,* Paris, 1877, pp. 202-219:

- համայնքի ենթակայության տակ առկա գործերը հստակորեն բաժանվում են երկու խմբի՝ սեփական և կենտրոնական իշխանության կողմից փոխանցված,
- տեղական ինքնակառավարումը համայնքի սեփական գործավարությունն իր բնույթով հստակորեն տարբերվում է պետական գործավարությունից,
- տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի, այլ ոչ թե պետության մարմիններ են,
- իշխանության պետական մարմիններն իրավասու չեն խառնվել ներհամայնքային լիազորության խնդիրներին[15]:

Բնական իրավունքի վրա հիմնված այս տեսությունն իր արտացոլումն է գտել 1831 թ. ընդունված և ցայսօր գործող Բելգիայի սահմանադրության 41-րդ հոդվածում, որն ամրագրում է համայնքային իշխանությունն իբրև պետական իշխանության առանձին տեսակ[16]:

Արդեն որոշակիացած գիտատեսական այս հիմքի վրա էլ 19-րդ դ. երկրորդ կեսին Ռ. ֆոն Մոլի, Օ. Ռեսլերի, Օ. Գիրկեի և այլոց ջանքերով[17] սկսում է ձևավորվել *ինքնակառավարման*

---

[15] Մանրամասն տե՛ս Гронский, П., *Децентрализация и самоуправление,* Москва, 1917, сс. 5-10.

[16] *«Հոդված 41. Շահերը, որոնք ունեն բացառապես տեղական կամ նահանգային բնույթ, Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների համաձայն, կարգավորվում են տեղական կամ նահանգային խորհուրդների կողմից» (ֆր.՝* “Article 41. Les intérêts exclusivement communaux ou provinciaux sont réglés par les conseils communaux ouprovinciaux, d'après les principes établis par la Constitution”): Բելգիայի սահմանադրության տեքստը տե՛ս երկրի սահմանադրական դատարանի պաշտոնական կայքում՝ http://www.const-court.be/fr/textes_base/constitution_de_la_belgique.pdf [ֆր., հասանելի է 12.08.2017]:

[17] Տեղական կառավարման հարցի շուրջ 19-րդ դ. երկրորդ կեսին եվրոպական գիտական շրջանակներում ծավալված տեսական բանավեճի մասին մանրամասն տե՛ս Palmowski J., *Liberalism and Local Government in Late Nineteenth-Century Germany and England,* The Historical Journal, vol. 45, no. 2, 2002, pp. 381-409:

հասարակական (հասարակական տնտեսվարման) տեսությունը: Այն ևս որպես ելակետ էր ընդունում պետության և համայնքների հակադրումն ու տեղական համայնքների կողմից սեփական գործառույթներն իրականացնելու ազատությունը: Տեսության հիմնական դրույթներն էին.

• հասարակական և քաղաքական շահերը չեն համընկնում, ուստի պետությունն ու հասարակությունն իրավունք ունեն զբաղվելու միայն սեփական շահերով,

• պետությունն ու ինքնավարությունը դիտարկվում են իբրև երկու չհատվող շրջաններ, որոնք ունեն սկզբունքորեն տարբեր բովանդակություն (համազգային և տեղային),

• հասարակական և պետական շահերի հակադրության մեջ է հենց պետք փնտրել տեղական ինքնակառավարման մարմինների լիակատար ինքնուրույնության հիմքերը,

• տեղական մարմինները լիակատար ու անձեռնմխելի իրավունք ունեն պետությունից անկախ զբաղվել տեղական տնտեսվարմամբ և հասարակական խնդիրներով (Մոլ),

• ինքնակառավարումը հասարակական ազատության դրսևորում է, ուստի բարոյապես անհրաժեշտ է (Ռեսլեր)[18]:

Ինքնակառավարման խնդիրների հասարակական թերի ընկալման հողի վրա 19-րդ դ. գերմանացի գիտնականներ Լ. ֆոն Շտեյնի և Ռ. ֆոն Գնեյստի կողմից[19] մասնագիտական դիսկուրսի

[18] Riddell D., *Social Self-Government: The Background of Theory and Practice in Yugoslav Socialism*, The British Journal of Sociology, vol. 19, no. 1, 1968, pp. 47-75, Плахонин А., *Обзор основных теорий соотношения местного самоуправления и государственнои власти,* Вестник АмГУ, № 44, 2009, сс. 91-92.

[19] Sť u Pope G., *The Political Ideas of Lorenz Stein and Their Influence on Rudolf Gneist and Gustav Schmoller,* German History, 1987, vol. 4, pp. 60-61, Черняк Э., *Государственная теория самоуправления в трудах европейских ученых Л. Штейна и Р. Гнейста,* Вестник Казанского технологического университета, 2010, №11, сс. 384-396, Моспаненко И., *Местное самоуправление во взглядах представителя*

հարթակ է բերվել *ինքնակառավարման պետական տեսությունը:* Տեսության հիմնական դրույթներն են.

• տեղական ինքնակառավարումը նաև և առաջ պետական կառավարման գործընթացի կազմակերպական ձևերից մեկն է, և մաս է կազմում պետական համակարգի[20],

• այն լիազորությունները, որով օժտված են տեղական ինքնակառավարման մարմինները, պատվիրակված են պետության կողմից,

• պետության ու ինքնակառավարման հակադրությունը զուրկ է որևէ իմաստից,

• տեղական ինքնակառավարումը պետության մասն է, պետական վարչարարության տեղյանացվածության դրսևորումը[21]:

Անհրաժեշտ է նշել, որ ինքնակառավարման պետական տեսության շրջանակներում, պայմանավորված հիմնադիրների գաղափարական տարաձայնություններով, տարբերակվում են երկու ուղղություն՝ քաղաքական (Գնեյստը կարևորում էր) և իրավական (Շտեյնը շեշտում էր ՏԻՄ իրավական կարգավիճակը)[22]:

Բացի վերոհիշյալ խոշոր տեսություններից գոյություն ունեն նաև տեսական մի շարք այլ կոնցեպտներ, որոնք փորձում են բացատրել տեղական ինքնակառավարման էությունը: Դրանցից են

немецкой политической мысли второй половины XIX – начала XX века Р. Гнейста, Środkowoeuropejskie Studia Polityczne, 2014, №1, cc. 129-140:

[20] Այս դրույթի ողջ բովանդակությունը խտացված է գերմաներեն *«Selbstverwaltung – Staatsverwaltung»* (*«Ինքնակառավարումը՝ պետական կառավարում»*) հայտնի բանաձևման մեջ: Տե՛ս Vieli G., *Bundesstaat und Selbstverwaltung,* Steiger, 1953, S. 75:

[21] Whalen H., *Ideology, Democracy, and the Foundations of Local Self-Government,* The Canadian Journal of Economics and Political Science / Revue canadienne d'Economique et de Science politique, vol. 26, no. 3, 1960, pp. 379-382.

[22] Горбатюк Е., *Основные теории местного самоуправления: аналитический обзор,* Вестник СПбГУ, Политология. Международные отношения, 2015, вып. 1, с. 24.

մունիցիպալ սոցիալիզմի, մունիցիպալ դուալիզմի, հասարակական սպասարկման տեսությունները[23] և այլն:

Ընդհանուր առմամբ, քաղաքական այս տեսություններից գրեթե բոլորում ինքնակառավարման կարևորությունն ընդգծվում է ժողովրդավարացման և որոշումների կայացման գործընթացում տեղական մասնակցության համատեքստում: Ավելին, կարելի է պնդել, որ առանց տեղական իշխանության որևէ քաղաքական համակարգ չի կարող լիարժեք համարվել[24]: Կայացած տեղական ինքնակառավարման նշանակությունը հատկապես ակներև է դառնում, եթե հաշվի առնենք ստորև բերված գործոնները.

- այն ծառայում է իբրև լայն զանգվածների քաղաքական կրթվածությունը բարձրացնելու հարթակ[25],
- այն պարարտ հող է ծառայում քաղաքական առաջնորդների աճի համար[26],

---

[23] Դրանց մասին մանրամասն տե՛ս Leopold E., McDonald D., Municipal *Socialism Then and Now: some lessons for the Global South, Third World Quarterly, vol. 33, no. 10, 2012, pp. 1837–1853, Шустов* В., *Теории местного самоуправления — политологический контекст,* Вестник Адыгейского государственного университета, № 3, 2013, сс. 214–220, Кузякин Ю., *Муниципальное право Российской Федерации: учебное пособие*, Москва, 2008, сс. 23-24*:*

[24] Mawood P., *Local Government in the Third World Countries*, Wiley and Sons, 1983, p. 66.

[25] Այս թեզն առաջ է քաշվել և հիմնավորվել դեռ 18-րդ դարի կեսին Ալեքսիս դը Տոկվիլի կողմից: Տե՛ս, օրինակ, Tocqueville, A. de, *The old regime and the French revolution,* (trans. Bonner J.,), Harper & Brothers, 1856, pp. 61-72.

[26] Բրիտանացի քաղաքական տեսաբան Հարոլդ Լասքին գրում է. *«...եթե խորհրդարանի անդամները մինչև պաշտոնապես* [Խորհրդարան, — Հ. Մ.] *մուտք գործելը 3 տարի պաշտոնավարեին տեղական մակարդակում, ապա ձեռք կբերեին* [քաղաքական, — Հ. Մ.] *աճի համար այդքան կարևոր փորձի հիմքերը»:* Տե՛ս Laski H., *Democracy in crisis,* Chapel Hill, 1931, p. 31: Այս գործոնն առանձնապես ցցուն է արտահայտված Թուրքիայի դեպքում: Տե՛ս Toprak Z., *Yerel yönetimlerde başkanin politik lider rolü,* İstanbul Üniversitesi Hukuk Fakültesi Mecmuası, c. 69, sayı. 1-2, ss. 299-316: Թուրքիայի ՏԻՄ համակարգից քաղաքական գործիչների աճի ֆենոմենն (ԹՀ գործող նախագահ Ռ. Թ. Էրդողանի օրինակով) առանձին ուսումնասիրության նյութ է:

• կառավարման բուրգի ներսում այն ապահովում է կենտրոնական իշխանության որոշակի հաշվետողականությունը[27]:

Տեղական ինքակառավարման գիտատեսական հիմքերի վերացարկման տեսակետից առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում ՏԻՄ համապատասխան մոդելի ընտրության հարցը[28]: Ուսումնասիրողների մեծ մասն առանձնացնում է ՏԻՄ համակարգի կազմակերպման երեք բազային մոդել՝ *անգլոսաքսոնական, մայրցամաքային և խառը*[29]: Հարկ է նշել, որ գոյություն ունեն ՏԻՄ մոդելներ դասակարգման այլ ձևաչափեր ևս[30], սակայն տեսությունների և մոդելների համադրման

[27] Իշխանության ապակենտրոնացման խնդիրների նշանավոր ուսումնասիրող Բրայան Սմիթը գրում է. *«Ճշմարիտ է, որ տեղական ժողովրդավարության միջոցով կարելի է վերականգնել* [կենտրոնական իշխանության, — Հ. Մ.] *հաշվետվողականության առավել բարձր մակարդակ»:* Տե՛ս Smith B., *Decentralization: the territorial dimension of the state,* Allen & Unwin, 1985, p. 27:

[28] Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Акмалова А., *Модели местного самоуправления*, Москва, 2001, Pawlowska A., Radzik K., *Institutional Models of Local Governance – Comparative Analysis*, Materials from the 15th NISPAcee Annual Conference, May 17 - 19, 2007, Kyiv, http://www.nispa.org/files/conferences/2007/papers/200704100858340.KievPaper.Pawlowska.Radzik.doc [անգլ., հասանելի է 17.08.2017] Koyuncu B., *Yerel özerklik: modeller ve uygulamalar,* Muğla Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, sayı 1, 2000, ss. 97-117: Տե՛ս նաև Վարդանյան Եվ., *Տեղական ինքնակառավարման մոդելի ձևավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում,* Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, № 2 (17), 2015, էջ 3-13:

[29] Чиркин В., *Организационные формы местногосамоуправления: Россия и зарубежный опыт*, Журнал российского права, № 8, 1997, с. 98

[30] Ռուս հետազոտող Նիկոլայ Եմելյանովն, օրինակ, առանձնացնում է ՏԻՄ մոդելների հետևյալ բաժանումը՝ անգլոսաքսոնական, մայրցամաքային (Ֆրանսիա), հիբրիդային (Գերմանիա, Ավստրիա, Ճապոնիա), խորհրդային (Չինաստան, Հս. Կորեա, Կուբա): Տե՛ս Емельянов Н., *Местное самоуправление: международный опыт*, Москва, 1997, с. 10. Անգլալեզու հետազոտողները մայրցամաքային մոդելը սովորաբար տրոհում են՝ առանձնացնելով

տեսակետից լիովին բավարար է դիտարկել հենց հիշյալ երեք մոդելները:

Տեղական ինքնակառավարման անգլոսաքսոնական մոդելը ձևավորվել է եվրոպական արևմտյան դասական մունիցիպալիզմի բնօրրան համարվող Մեծ Բրիտանիայում և այժմ էլ տարածված է նախկինում Բրիտանական կայսրության մաս կազմած երկրներում (Միացյալ Թագավորություն, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Իռլանդիա, Հնդկաստան, Նոր Զելանդիա և այլն): Այս մոդելը նախատեսում է, որ ինքնակառավարման մարմինները պետք է օժտված լինեն կենտրոնական իշխանությունից նշանակալիորեն ազատ ու որոշակիորեն ինքնուրույն գործելու հնարավորությամբ: Այն իր տեսական հիմքերով հարում է ազատ համայնքի ինքնակառավարման տեսությանը[31]:

Ազատ համայնքի տեսության նկատմամբ հակառակ հայեցակետային ելակետերով առաջնորդվող ինքնակառավարման պետական տեսության հիման վրա ստեղծվել է ՏԻՄ մայրցամաքային մոդելը: Այն կիրառվում է մայրցամաքային Եվրոպայի երկրների նշանակալի մասում (Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա և այլն), ինչպես նաև Ասիայի ու Աֆրիկայի՝ նախկինում այդ երկրների գաղութներ եղած մի շարք պետություններում: Այս երկրներում ինքնակառավարումն իրականացվում է կենտրոնական իշխանության կողմից տրված լիազորությունների

հարավեվրոպական (միջերկրածովյան կամ Ֆրանկոյի), կենտրոնաեվրոպական (ֆրանսիական) և հյուսիսեվրոպական (սկանդինավյան) մոդելները: Տե՛ս Sadioğlu U., *Theoretical Foundations and Discussions on the Reformation Process in Local Governments,* IGI Global, 2016, p. 9, Swianiewicz P., *An Empirical Typology of Local Government Systems in Eastern Europe,* Local Government Studies, vol. 40, issue 2, 2014, p. 293:

[31] Բրիտանական ՏԻՄ պատմության և անգլոսաքսոնական մոդելի մասին մանրամասն տե՛ս Chandler J., *Explaining Local Government: Local Government in Britain Since 1800,* Manchester University Press, 2007:

հիման վրա՝ պահպանելով իշխանական բուրգի դասական սուբորդինացիան[32]:

Գլոբալիզացիոն գործընթացներին զուգահեռ տեղի ունեցավ ՏԻՄ բնույթի շուրջ առկա տեսական մոտեցումների և ինքնակառավարման գործող մոդելների մերձեցում և միախառնում, ինչի հետևանքով ասպարեզ եկավ այսպես կոչված խառը մոդելը, որը հիմնվում է մունիցիպալ դուալիզմի տեսության վրա: Տեղական ինքնակառավարման խառը համակարգ ունեն, օրինակ, Գերմանիան, Ավստրիան, Ճապոնիան և այլն: Այն տարբեր է պարունակում ինքնակառավարման ինչպես անգլոսաքսոնական, այնպես էլ մայրցամաքային մոդելներից՝ ներառելով ՏԻՄ ավանդույթի ինչպես պետականակենտրոն, այնպես էլ համայնքակենտրոն մոտեցումները[33]:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ինքնակառավարման երեք հիմնական մոդելները՝ ժողովրդավարական և գործառութային հարթություններում:

Աղյուսակ 1. Ինքնակառավարման հիմնական մոդելները[34]

Մոդելը	**Ժողովրդավարական հարթություն**		**Գործառութային հարթություն**	
	Քաղաքական որոշումների կայացման լիազորություն	*Հավաքական տեղական ինքնություն*	*Ռեսուրսների տնօրինման լիազորություն*	*Տնտես. համատեղ. աստիճ.*

[32] Մոդելի ու դրա շուրջ վերջին զարգացումների մասին տե՛ս Kuhlmann S., *New Public Management for the 'Classical Continental European Administration': Modernization at the Local Level in Germany, France and Italy,* Public Administration, vol. 88, issue 4, 2010, pp. 1116-1130:

[33] Գերմանական դասական դուալիստական մոդելի մասին մանրամասն տե՛ս Berg R., Rao N., *Transforming Political Leadership in Local Government,* Springer, 2005, pp. 29-31:

[34] Աղյուսակը ներկայացված է ըստ Featherstone K., *Europeanization and the Southern Periphery*, Routledge, 2014, p. 101:

Անգլոսաքսոնական	սահմանափակ	թույլ	սահմանափակ	բարձր
Մայրցամաքային	նշանակալի	ուժեղ	նշանակալի	աճող
Խառը	որոշակի	ուժեղ	որոշակի	բարձր

Ժամանակակից թուրքական ՏԻՄ համակարգը ստեղծվել է օսմանյան ինքնակառավարման փորձի հիման վրա, որն իր հերթին ձևավորվել էր հետհեղափոխական Ֆրանսիայում գործող մոդելի համանմանությամբ[35]: Պայմանավորված 19-րդ դարի երկրորդ կեսին Ֆրանսիայում տիրող որոշակի կենտրոնամետ միտումներով՝ օսմանյան ինքնակառավարումը ևս կենտրոնամետ էր[36]: Սակայն, եթե բուն ֆրանսիական մոդելը մինչև այժմ բազմաթիվ փոփոխություններ է տեսել, ապա Թուրքիայի վարչական համակարգը շարունակում է մնալ հիմնականում կենտրոնամետ և պահպանողական[37]: Տեղական կառավարման օսմանյան համակարգի հիմնական սկզբունքները, որ ներմուծվել էին իբրև պաշտպանական արդիականացում[38] և կոչված էին ամրապնդել սուլթանական իշխանության խարխլված հիմքերը, նվազագույն փոփոխություններով հասել են մեր օրերը: Հանրապետական շրջանում իրականացված ՏԻՄ

[35] Stʹu Yıldırım U., Şengül R., Bulut Y., *Türkiye için yeni bir model önerisi: Bölge Yönetimi*, Yerel Yönetimler Sempozyum Bildirileri, Ankara, 2002, s. 341:

[36] Ortaylı İ., *Tanzimat'tan Cumhuriyet'e Yerel Yönetim Geleneği (1840-1878)*, İstanbul, 1985, s. 29.

[37] Kartal N., Tuncel G., Göktolga O., *Local Governments and Government of Cities in Turkey,* Journal of Public Administration and Governance, vol. 5, no. 1, 2015, p. 17.

[38] Ökmen M., Baştan S., Yılmaz A., *Kamu yönetiminde yeni yaklaşimlar ve bir yönetişim faktörü olarak yerel yönetimler,* Ökmen M., Yılmaz A., *Kamu Yönetimi: Kuramdan Uygulamaya,* Ankara, 2004, ss. 23, 54.

բարեփոխումներն, ըստ էության, չեն փոխել ողջ համակարգի կենտրոնամետ բնույթը[39]:

Միաժամանակ, պետք է շեշտել, որ Թուրքիան, ի տարբերություն պետական կառավարման արևմտյան մոդելի բազմադարյա ավանդույթ ունեցող երկրների, չունի տեղական ինքնակառավարման արմատավորված ավանդույթներ[40]: ՏԻՄ համակարգը թուրքական քաղաքական ու հասարակական մտքի ուշադրության կենտրոնում է հայտնվել միայն 1982 թ. սահմանադրության ընդունումից հետո[41]:

Ինքնակառավարման մայրցամաքային մոդելի թուրքական ադապտացիան ունի մի շարք թերություններ, որոնք խոչընդոտում են համակարգի լիակատար կայացմանը[42]: Թուրքական վարչական համակարգում առկա կենտրոնամետ ուժեղ միտումները, որոնց մասին խոսվեց վերևում, բերել են նրան, որ երկրի սահմանադրությամբ ամրագրված սահմանված *«տեղական*

---

[39] Parlak B., Sobacı Z., Ökmen M., *The Evaluation of Restructured Local Governments in Turkey within the Context of the European Charter on Local Self-Government,* Ankara Law Review, vol. 5, no. 1, 2008, p. 31.

[40] Bezmez D., *The Politics of Urban Waterfront Regeneration: The Case of Haliç (the Golden Horn), Istanbul*, International Journal of Urban and Regional Research, vol. 32, issue 4, 2008, p.830. Տե՛ս նաև Heper M., *Local government in Turkey: governing greater Istanbul,* Routledge, 1989, p. 3-7:

[41] Polatoğlu A., *Turkish local government: the need for reform,* Middle Eastern Studies, vol. 36, no. 4, 2000, p. 156.

[42] Թուրք հետազոտող Նիհալ Ինջիողլուն գրում է. *«Պատմականորեն թուրքական վարչական համակարգը ամուր կենտրոնամետ ուղղվածություն է ունեցել, ինչն արտահայտվել է պետության նկատմամբ տեղական իշխանության մարմինների համեմատական թուլությամբ: Սահմանափակված լինելով կենտրոնական իշխանության կողմից նրանց նկատմամբ իրականացվող անհարկի քաղաքական և ֆինանսական վերահսկողությամբ՝ ՏԻՄ մարմինները մնացել են թույլ և Անկարայից կախված»*: Տե՛ս İncioğlu N., *"Local elections and electoral behavior"* in Sayarı S., Esmer Y., (ed.), *Politics, parties, and elections in Turkey*, Lynne Rienner Publishers, p. 75:

կառավարման սկզբունքը»[43] չի ապահովում կենտրոնական ու տեղական իշխանությունների միջև քաղաքական պարտականությունների հստակ տարաբաժանումը[44]: Բացի դրանից, ՏԻՄ մարմինները, ֆինանսապես ամբողջովին կախված լինելով կենտրոնական իշխանությունից, ըստ էության զուրկ են նաև տնտեսական ինքնուրույնությունից[45]:

Վերջին 180 տարվա ընթացքում թուրքական տեղական կառավարման համակարգը գոյակցել է ամենատարբեր քաղաքական ռեժիմների հետ՝ բացարձակ միապետությունից մինչև բազմակուսակցական հանրապետություն: Այն անցել է համակարգային փոփոխությունների մի քանի շրջան՝ ցենտրիզմից ու էտատիզմից մինչև լիբերալ բարեփոխումներ ու ներդաշնակեցում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի հետ: Այսօր այն վերածվել է թուրքական քաղաքական համակարգի կարևոր տարրի, որի հետ կապված իրողություններն

---

43 *«Հոդված 127... Տեղական իշխանության մարմինների ձևավորումը, պարտականություններն ու իրավասությունները, համաձայն տեղական կառավարման սկզբունքի, սահմանվում են օրենքով»* (թրք.՝ *«Madde 127... Mahallî idarelerin kuruluş ve görevleri ile yetkileri, yerinden yönetim ilkesine uygun olarak kanunla düzenlenir»*): Թուրքիայի Հանրապետության սահմանադրության տեքստը տե՛ս երկրի սահմանադրական դատարանի կայքում՝ http://anayasa.gov.tr/icsayfalar/mevzuat/1982anayasas%C4%B1.html [թրք., հասանելի է 12.08.2017]: Տեղական ինքնակառավարման թուրքական մոդելի օրենսդրական կողմին մանրամասն անդրադարձ կկատարվի հաջորդ գլխում:

44 Sayan İ., Övgün B., *The Autonomy of the Local Governments in Turkey: A Continuous and Current Discussion,* Humanities and Social Sciences Review, vol. 3, no. 2, 2004, p. 447

45 Ulusoy A., Akdemir T., *Yerel yönetimler ve mali özerklik: Türkiye ve OECD ülkelerinin karşılaştırmalı analizi,* Balıkesir Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, cilt 12, sayı 21, s. 265

ու խնդիրները կարիք ունեն պատմաքաղաքական համակողմանի քննության[46]:

ТУРЕЦКАЯ МОДЕЛЬ ДЕЦЕНТРАЛИЗАЦИИ ВЛАСТИ В КОНТЕКСТЕ ОСНОВНЫХ ТЕОРИЙ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ

(резюме)

Маргарян Айк

На протяжении последних 180 лет турецкая система местного управления сосуществовала с разными политическими режимами: от абсолютной монархии до многопартийной республики. Она прошла несколько этапов системных переобразований: от центризма и этатизма до либеральных реформ и гармонизации с Европейской хартией местного самоуправления. Сегодня эта система является важной частью политической структуры Турции, и ввиду этого все проблемы и реалии связаные с ней нуждаются во всестороннем историко-политическом анализе.

В данной статье рассматривается вопрос теоретической основы современной системы местного самоуправления в Турции. В связи с этим представлены принципиальные положения базовых политологических теорий, а также обозначены основные мировые модели организации местного самоуправления.

[46] Bayraktar S., *Turkish municipalities: Reconsidering local democracy beyond administrative autonomy,* European Journal of Turkish Studies [Online], 2007, § 1, http://ejts.revues.org/1103 [անգլ., հասանելի է 12.08.2017].

THE TURKISH MODEL OF DECENTRALISATION IN THE CONTEXT OF MAIN THEORIES OF LOCAL SELF-GOVERNMENT (summary)

Margaryan Hayk

Over the past 180 years the Turkish system of local government coexisted with various political regimes: from absolute monarchy to a multi-party republic. It went through several stages of systemic transformation: from centrism and statism to liberal reforms and harmonisation with European Charter of Local Self-Government. Currently this system is an essential part of Turkey's political structure and thus all problems and realities associated with it require a detailed politico-historical analysis.

This article deals with the theoretical framework of modern system of local self-government in Turkey. In this regard, it also covers fundamental principles of basic theories of political science as well as the main global models of organisation of local government.